

ԲԱԺԱՆՈՐԴԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	համար
սարեկա՛ն	12 ֆր.
վեցամս'այ	7 "
Արսասահմանի համար	սարեկա՛ն
15 ֆր.	
վեցամսայ	8 "
Աւերիկայի համար	սարեկա՛ն
3 ֆր.	
վեցամսայ	1.50 "

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է: Իրեֆիկն աւելի սեղաններու համար 20 0/0 զեղը կը լայ:

Վառնայի համար ձեռք 10 սանթիմ է

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՄՅԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ ԲԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐՔԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Դասակ էլ ցրա՛մ
որ կի՛ն խմբագրութեան
հասցիին

Редакция на вѣстянкѣ
"Шаржумъ"
Варна

Redaction du journal
"Charjoum"
Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար
ձեռք 15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար
ձեռք 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք է՛ս չե՛ն
ցրուի՛ր

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԵԳԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿՅԵՆԻԿ ՎՃԱՐԷ

«ՏՐԱԿ ՏՐԱԿ Հ. Յ.

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՁ»

Արդէն այս անունով բըրօշիւրը յանձնված է տպագրութեան:

Բրօշիւրի նպատակն է, առանց խժըժանքի Դաշնակցութիւնը մէջ տեղ դնել իր իսկութեամբը և միեւնոյն ժամանակ փաստել թէ՛ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց: Ինական է որ բրօշիւրի մէջ փաստող ղօկիւմանները մեծ տեղ պիտի գրաւեն:

Բրօշիւրի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր:

Դիմել «Շարժում» խմբագրութեան

Café Promenade Vienne

Այս շքեղ ք-ֆէն կը գրտնուի Վիեննա քաղաքի քաղաքի միջին վրայ: Կրտսանայ զանազան հայերէն թերթեր: Առ հասարակ բոլոր հայ կամ արեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն: Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս, ուր պիտի գտնեն իրենց յարմար դիւրութիւններ և անհրաժեշտ տեղեկութիւնները:

ՈՒՐԻՇ ՊՍՏՃԱՌ ԷԼ ԿԱՅ

«Շարժում» նախորդ համարում մի յօդուած հրատարակեցինք՝ «Ինչու կը պահեն Անգրանիկը» վերնագրով: Յօդուածագիրը ժողովրդի սիրած հերոսին թագցնելը բացատրում էր նրանով որ դաշնակցական շէֆերը վախենում են թէ Անգրանիկը ժողովրդի մէջ մտնելով, պէտք է հասկանայ կուսակցութեան մէջ գոյութիւն ունեցող պատուութիւնները:

Նախ յայտնենք որ Անգրանի-

կին ամեն տեղ թագցրել են. թէ ժընեուում, թէ Պարիզում. բացի այդ միշտ հետը մի մայր եղել է որպէսզի Անգրանիկը միջոց չունենայ իբրեւ երկրի գործիչ իր սրտի դառնութիւնները թափել այս կամ այն աչնիւ հայի առջեւ: Լինի նա դաշնակցական թէ ուրիշ կուսակցութեան պատկանող թէ չեղող հայ:

Անգրանիկի թագցնելու ամեն սղիխուոր պատճառը այն է, որ դաշնակցական վարիչները նրանից լսելով կազմակերպութեան հանգէպ դժգոհութիւններ, ոչ թէ վախենում են որ ինքը Անգրանիկը ժողովրդից կը վարակվի, այլ ժողովրդին կը յայտնէ կազմակերպութեան անկարողութիւնը երկրի մէջ և այսպիսով իր հեղինակաւոր ձայնով կը փաստէ մեր ասածները երկրի անուշադիր միջուկ և փոսակար կարգադրութիւնների մասին: Անգրանիկը գաղտնի է պահված ոչ միայն նրանով որ եւրոպոզ հայ ժողովրդից, այլ և այն դաշնակցականներից, որոնք քննադատութեն են վերաբերվում գէպի կազմակերպութիւնը: Իսկ թէ մի երկու երեք հոգու հետ էլ տեսնված է միշտ հետը լրտես է ունեցել վարիչ մարմինների անգամներից մէկին, որը Անգրանիկի բերանը բացված միջոցին, երկրի կացութեան մասին, իսկոյն աչքով ունքով նշաններ է արել այդ վտանգաւոր նիւթի մասին չը խօսել: Անգրանիկը իբրեւ անձնուէր և հայրենիքին ներկայած մարդ, իր կեանքը տանեակ, հարիւր անգամներ վտանգի ենթարկող մարդ սիրած հայրենիքի համար վարդօյից անշուշտ լաւ գիտէ Դաշնակցութեան անհոգութիւնը գէպի երկիրը: Գէպի բուն ապտամբական գործը և համոզված ենք թէ մի տարվան եւրոպայի կեանքը նրան չեն մոռացնել տալ իր իսկական ապտամբի պարտականութիւնները: մանաւանդ, եթէ չեմ սխալվում, թէ Պարիզում և թէ ժընեուում գտնվել են գիտա-

կից դաշնակցականներ որոնք կարողացել են Անգրանիկին որոշ գաղափար տալ դաշնակցական վարիչների մասին:

Եթէ Անգրանիկն էլ անգիտակից ձեւանար, եթէ նա էլ չըբըռնէր Դաշնակցութեան վարիչ համարվածների հոգեբանութիւնը այն ժամանակ պէտք է վերջնապէս գալ այն եզրակացութեան որ հայ յեղափոխութեան ամենափայլուն հերոսներն իսկ կարող են ենթարկվել կեղծուպատիր շայնքների, և հայրենիքի իրական շահերը մոռանալ իրենց հանգէպ եղած կեղծ պատիւների, որոնց միակ նպատակը է աչք կապել, անբարոյ կանացնել, մեռցնել քննադատող դժգոհ ոգին—ժողովրդի շահագործումը աւելի անսանձ կերպով յարատեւելու համար:

Այո՛, Անգրանիկը իրերի կացութիւնը ըմբռնելու համար վարդօյի պէտքը չունի, նա եղել է վասպուրական և գիտէ որ Դաշնակցութիւնը այնտեղ ոչինչ ունի, եղել է Տարօն գիտէ որ այնտեղ գտնված շնչին քանակութեամբ գէնքերի մեծ մասը ժողովուրդը իր ստակներով է ձեռք բերել: Եղել է Սասուն գիտէ սր Դաշնակցութիւնը այդ քաջարի ժողովրդի հանգէպ իր պարտականութիւնը չի կատարել: Էլ ուրիշի մատնանշումների ի՞նչ պէտք ունի: Հաւատանք որ Անգրանիկը կազմակերպութիւնը դատապարտողներից մին կը լինի Ընդհանուր ժողովում:

ՎԱՐՄՈ

ԿՈՐՔԻԻ ԿՈՉԸ

Յարը ցրուած է Տուժան: Այս պըզտիկ մարդը գահին վրայ զողջով իր կեանքին և իշխանութեան համար, որպէս բարտի տերեւ մը, գրչի մէկ հարուածով, ձեռք ջգակտոր շարժումով մը, ջնջեց Ռուսիայի մէջ օրէնքի ամէն երեւոյթ: Եւ կենդանացուց սպաննութիւններու, կողոպտումներու և խժգժութիւններու նոր շարք մը:

Ռուս կառավարութիւնը հիմա պիտի հաստատէ բարբարոս և անասնական փոխարինութեան քաղաքականութիւն մը:

Դահիճները և գողերը, որոնք կը շրջապատեն գահը, և կը պաշտպանեն զայն արենապիղծ ձեռքերով, վերջերս շատ դառն ու անարգական ճշմարտութիւններ լսած են քաջ և պատուաւոր մարդերէ:

Ազոր համար վրէժ պիտի առնեն, ու իրենց վրէժառութիւնը սաստիկ պիտի ըլլայ: Դառնացած, արիւն թափելու սովոր, և քաջաբերած օրէնքի բացակայութեան, անգամ մը եւս աշխարհը պիտի սարսափեցնեն իրենց գործերով:

Անոնք կը սկսին ոչնչացնել, եւ ջնջել ժողովուրդին առաջնորդները, և առաջնորդները ջնջելէ վերջ նորէն պատերազմ պիտի հրատարակեն ժողովուրդին դէմ, անգէն ու անպաշտպան ժողովուրդին, որ խաղաղութիւն և քաղաքակրթութիւն կերտող է, և որ այնքան անհամբերութեամբ արդարութեան յաղթանակին սպասած է:

Սեւ, արիւնթաթաւ Բեւերը մահուան պիտի սաւառին երկրին վրայ ամիսներով: Պարտասած հողը մարդերու հազարաւոր դիակներ պիտի կլէ, որոց միակ եղեռնագործութիւնն էր մարդկային կեանք մը ապրելու բաղձալ:

Շատ մը կիներ և մանուկներ պիտի մեռնին բերքով և սուբերով:

Շատ մը մեծաշուք անիրաւութիւններ պիտի գործուին:

Աշխարհը սոսկումով ու զայրոյթով պիտի բռնուի:

Հոս ու հոն հանրային ժողովներ պիտի ջուժարուին, ուր ատենախօսները զօրաւոր կերպով պիտի դապապարտեն Յարը, և անոր բարբարոսներուն խուճը:

Խօսողները պիտի վարձատրուին ծախհարութիւնով, եւ ներկաները պիտի մեկնին ժողովէն այն հպարտ համազմամբ, թէ օտար երկրի մը դժբաղդ ժողովուրդին կոչին պատասխանած են, եւ այսպէս մարդկութեան պարտքը կատարած Միեւնոյն ատեն Ռուսերու արիւնը պիտի հեղուլայն հոսանքներով:

Քաղաքակրթեալ ժողովուրդ մըն ենք, թէ ոչ:

Կը խորհիմ թէ չենք: Մենք կը կեղծենք միայն, թէ մարդկութեան կեանքը կը սիրենք, օրէնքը կը յարգենք, եւ եղեռնագործներէն կը զզուինք:

Եթէ իմ դրացիներս կը յարձակին

եւ կը շարժուին մարդկային արա-
րածները . ու ես զոհերուն հառաչան-
քը կը լսեմ, ու թէեւ կը գիտամ ա-
նոնց վրայ, չեմ վազեր օգնութեան,
քաղաքակրթեայ աճը մըն էմ :

Եթէ քաղաքը մը մէջ ապրիմ, ուր
անհամար սպանուածներ են, եղբան-
ներ կը պատահին ամէն օր, ու ես
ձանօթ եմ այդ զէպերուն, քաղա-
քակրթեայ աճը մըն էմ :

Եթէ աշխարհին մէջ, ուր կը բնա-
կիմ եւ զաւակներս կը մեծցնեմ Ռու-
սիոյ եւ Թուրքիոյ մէջ պատահածնե-
րուն նման սոսկումի եւ անօրէնու-
թեան գործեր կը կատարուին, ու
եւս մինչդեռ կը դատաւարեմ այս
գործերը, կը մխիթարեմ ինքզինքս
մտածումովը թէ իմ կեանքս աւելի
ապահով է, հանգիստ եւ լաւ է, ու
այսպէս մխիթարեմ, գոհ կապրիմ
իմ ծակիս մէջ, քաղաքակրթեայ աճը
մըն էմ :

Ժողովուրդներ, որոնք սրտերը ազ-
գերու եղբայրութեան գիտակցու-
թիւնը չունին, քաղաքակրթեայ չին,
այլ տակաւին վայրենիներ :

Ժողովուրդներ, որոնք հանդար-
տութեամբ կապրին, երբ անոնց շուր-
ջը ամէն բան արեան մէջ թափուած
է, բռնութեամբ խեղդամահ եղած—
քաղաքակրթեայ չին, այլ սոսկ ինք-
նագոհ անասուններ :

Ժողովուրդներ, որոնք զաւակներ
ունին, եւ կը թուալարեն զանոնք
մեծնալ վայրի անխնայութեան եւ
անօրինութեան մէջ, ու թուաւոր-
ւել իրենց սրտերը տեքովը բոլոր
ապականութիւններու, որոնք աշ-
խարհը կեղծանեն— ո՛չ, այսպիսի ժո-
ղովուրդներ քաղաքակրթեայ չեն :

Այս աշխարհը բոլորին համար է,
եւ ամէն մարդ իրաւունք ունի անոր
հաճոյքներուն վրայ :

Ով որ կիրականացնէ այս ճշմար-
տութիւնը, թող պիտի չի տայ ինք
նրան կրաւորական հանդիստես մը
ըլլալ իր ընկեր արարածներու շոր
շարանքին :

Մարդիկ եղբայրներ են Ով որ կ'ի-
րականացնէ ասիկա անտարբեր ակա-
նատես մը պիտի չըլլայ իր եղբոր
սպանութեան, ինչ ազգէ ալ ըլլայ
անիկա—Անկլո-Սաքսոն, հրեայ կամ
Ռուս :

Աւելի սէր եւ խնամք մարդկու-
թեան համար :

Ասիկա է որ անձ մը ճշմարտագէտ
քաղաքակրթեայ կընէ :

Կեանքի մէջ գիտակից, իմաստուն,
եւ վստահելի մարդիկ աւելցնելը :

մարդիկ, որոնք իրենց սեռին բարին
կը հաւատան—ասիկա է ճշմարտ
քաղաքակրթութեան կարեւոր երե-
ւոյթը :

Ինչոր ճշմարտ քաղաքակրթեայ
ազգերը պարտին օգնել շարժուած,
մարտիրոսացած Ռուս ժողովուրդին :

Ասիկա է իրենց պարտքը, ասիկա
ըլլալու է իրենց հաճոյքը :

Որովհետեւ օգնել մարդկային ա-
րարածի մը, մարդկային կեանք մը
ապրիլ, այս օգնութեան մէջ մարդիկ
պարտին գտնել աշխարհի մէջ իրենց
կարեւորութեան գիտակցութիւնը,
վսեմ արդարացումը իրենց կեանքե-
րուն :

Անասունի կեանքը անզգայ է, գա-
զանի կեանքը՝ զգուշի, ու գանձի
եւ պզգալի է բռնապետի եւ ուրիշ
կենդանիներու կեանքը, որոնք ի-
րենց ընդերկրային օակերուն տաք
մթութեանը մէջ կը պառկին :

Մարդիկ կեանքը աւելի ընդարձակ
եւ խոր նշանակութեամբ մը աննու-
են :

Աշխարհը իմ տունս է, եւ անոր
մէջ պատահող ոեւ է բան պէտք չէ որ
անցնի առանց իմ սիրտս շարժուելու,
ու եթէ Ռուսիոյ մէջ պատահածնե-
րուն նման արաւոր ազգաներ կը պա-
տարին, ճշմարտ մարդիկ եւ կ'ինք
չեն կրնար անզգար մեալ անոնց
նեղկայութեան :

Ռուս ժողովուրդին օգնել, որպէսզի
ազատութիւնը յաղթէ, մարդկային
եւ վեհաւան է :

Ռուս ժողովուրդին օգնելը հարկա-
ւոր է ամէն մարդու համար, որ ինք-
զրօքը քաղաքակրթեայ աճը մը կը
նկատէ, եւ կը փափաքի այդպէս ըլ-
լալ :

Սգանցէ՛ք Ռուս ժողովուրդին որ
պատէ իր սարսիւր անոր կեանքը
ու արեւը, օօ, զ մահ-բոյններէն :

Մարդկութեան պարտքը՝ մարդ-
կութեան օգնել է :

Այս երկրին մէջ կենդանի մարդիկ
կ'ս, ու անոնք պիտի լսեն իւրիւր
ՍԵՎՈՒՄ ԿՍՄԻՐ

Հուրիւրէ՛յն, ո՛ւ Ն :

(Ձայն Հայրենեաց)

Թառաջիկայ տարուայ համար
Ազգ. վարժարանների մէջ ո՛ր է
է պաշտօն տանձնած շլիճնով՝
կուզենայինք մասնաւոր դասեր
տալ Հայելէնէ եւ Թրանսբէնէն :

ՀՄԱՅՆԱԿ ԽՈՒՇՊՈՒԼԵՍՆ

գուռը չէր բացվում... նա մէկ էլ ա-
ւելի ուժով զանգը քորչեց եւ դէմ-
քով դարձաւ զէպի փողոց . զէմքը
նիհար էր, պտտեց, բայց գունաւոր
աչքերը կանաչի էին զարկում, վերի
չրթունքը մի քիչ հաստ էր, նշան
կանացի զգայնութեան . նայածքը
սուր, միշտ համեղ որս փնտաող ար-
տայայտութեամբ... Մի վայրկեան
նա զիտեց փողոցը . ու երբ նկատեց
որ անցնող-դարձողները շատ են զի-
տում իսկ հեռ. ից էլ մի ոտսիկան ու-
չի ուշով նայում է, հեզնական ժպի-
տը խաղցնելով շրթունքների վրայ
կրկին մէջքը զէպի փողոցը դարձրեց
այդ վայրկեանին էլ գուռը բացվեց
եւ վրացի ծառան, որ ազնւականի
կերպարանք ունէր, կարող էր ազ-
նւական լինել, որովհետեւ բոլոր
վրացիները ազնւականներ են կար-
ծում իրենց, կոտորված ուսերէնով

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԻՈՒԹԻՆՆԵՐԸ

Նորակազմ «Հայրենական Միու-
թիւն»-ներու գոյութեան տեսքն
ու լուրը տեղի տուին գուրս
պոսթիկալու այլ և այլ նպատա-
կաւոր և աննպատակ դիտողու-
թեան, ոսկեզօծ թէօրիներու .
յեւեւահայեաց նկատառումներու
և ապագայ ոսկի երազներու . ու
ամեն ձայն ու միտք, որ կրնար
իրեն տեղ մը գտնել հրապարակի
վրայ, արտադրեց խորհուրդ
մը տալ, բարեփոխութիւն
մը առաջարկել, Հայկ. Միութեան
հիմնադիր հեղինակներուն... և
մինչեւ իսկ այն մեծ դատարկու-
թիւնները՝ որոնք իրենց լսակ և
անհաստես գործունէութեամբ
ջախջախած էին Երջանիկ Ապա-
գան, չի թերացան նուրբ քա-
ղաքագէտի հովերով յուռջ
նետուիլ իրենց բաժին մը ճան-
կելու . մին պոռաց—դրա մէջ
յեզպոստութեան նշոյն իսկ չի
երեւում,—միւսը—թէ այդպիսի
ձեռնարկ մը հայրենի հողին վը-
րայ միայն կրնար նպաստաւոր
ելք մը ունենալ ելն. ևլն. նման
առածին մեղուին՝ որուն մի օր
իշխաններ հրահանգ կուտայ՝
ժողովուրդին մէջ մը քիչ ալ
զգուս խառնել, ըսելով՝ թէ դժ-
պալու եղբայր, այն ժամանակ մեղրդ
աւելի համեղ կը լինի, որուն
մեղուն չի պատասխաներ սակայն,
այլ կը շարունակէ իւր օգտակար
գործը :

Հայրենական Միութեան մը
պէտքը վազուց, շատ վազուց
զգալի էր մեկ համար, բայց չկար .
և յետք մը քանի ընկերներով
իբր 12 տարի առաջ կազմեցինք
զայն Ռուսչուքի մէջ . համառօտ
կանոնադրե մը հետ ներքին հա-
մոզումիս կը թելագրէին մեզ՝
ամէն հայրենակ տեղ ունենալ
ազգ. միութիւնը և անտուկը,
մինչեւ ստեղծուած կեդրոնի մը՝
որ յանուն ազգին խօսելու և
գործելու իրաւատէր ու կարող

լինէր, և որուն պիտի յանձնուէ-
ին մեր դրամն ու հաւատարմու-
թիւնը, սակայն հակառակ մեր
բարի ցանկութեան՝ եղան պա-
րագաներ, որք առժամանակ
յեթաձգել ստիպեցին մեզ մեր
այդ գործը, ու այսօր՝ որք կը
լսենք «Հայկ. Միութիւններու»
նորակազմ գոյութիւնը, (մանա-
ւանդ Գահրէթիւնը) սրտանց կու-
րախանանք և կը մաղթենք ա-
մեն յաջողութիւն մեր բոլոր ըն-
կերներով . եւ եթէ այս առթիւ
ուզենք տակաւին մի քանի խօսք
ընել, մեր խօսքերը պիտի ըլ-
լան.—Պ. Պ. գիտողնե՛ր, կը
խնդրենք, առանց խմբածնքի
թողուցէք գործել այդ միու-
թիւններուն . քննադատեցէք ա-
նոնց ապագայ վատ գործերը
բայց մի գարնէք ընտրուած նը.
պատակին . անոնք կարող են,
բոլոր նորակազմներու նման՝ շու-
տով տեսնել իրենց թերութիւն-
ները, եթէ ունին, մի՛ ստիպէք
որ և իցէ մարմնի մտածել այն-
պէս՝ ինչպէս դուք կը մտածէք,
այդ տրամաբանական խորհուրդ
չէ, մի՛ բռնադատէք կարծիքի
ազատութիւնը, և եթէ պէտք կը
զգաք և օգտակար՝ որ անպատ.
ճառ ազգն ունենայ այնպիսի մի
կազմակերպութիւն որը կը քա-
լուցէք, դուք կազմակերպեցէք
զայն, և ազգը կարող է Ձեր և
Անոնց գործերը բազմապատկեան
գնել ու ծափել լաւագոյնը . քա-
ղաքի և օգնել անոր, Մեք
ազգէ՛ք եթէ ո՛չ չորս միլիոնէ,
զէթ երկուք ու կէս միլիոնէ կը
բազմանայ այսօր, յորմէ կրնայ
մինչեւ 5—10 մեծամեծ ընկերու-
թիւններ, կուսակցութիւններ և
մրութիւններ կազմուել, կազմե-
ցէք, բայց մի՛ արգիլէք, մի՛ ա-
նարգէք կազմուածները, շանա-
ցէք միայն լաւ գործել, լուրջ,
փորձ և հեռատես ըլլալ և բարձր
ի գուրս ցոյց տալ ազգին՝ ո՛չ թէ
Ձեր գոյութիւնը լոկ, այլ ձեր
գործերու օգտակար արդիւնքը,
ո՛չ թէ Ձեր թողած յիշատակն

Մ Ա Ն Ի Ա

(Վէպ Հայ Յեղափոխ. կեանքից)

180° Թուականների վերջերին էր .
Թիֆլիսի Միտայէլեան փողոցի դր-
ներից մէկի զանգը համարձակօրէն
քաջեց մի ուսուցիչի թէ կին,
յայտնի չէր . շէկ մազերը կարճ
կտրած, զգեստները անկարգ, չըր-
ջազգեստի ետեւի բացվածքի եզր
ները իրարից բաւական հեռացած,
այնպէս որ ճերմակ միտն, թէ չա
պիկը երեւում էր : Լաւ էր որ ա-
րկը արդէն մայր էր մտած եւ մի-
այն ժողովից գիտողը կարող էր տես
նել այդ արտակարգ թափփածու-
թիւնը... Հակառակ օրիորդի թէ
տիկնոջ ջղայնուտ զանգահարումին,

բարձրանալով՝ հասան մի սենեակի
դրան ծառան գուռը բացեց եւ ին-
քը հեռացաւ մի առանձին ուշադրու-
թեամբ հիւրին նայաւ՝ զոք ուսում-
նասիրելուց յետոյ .
Մտառայի հեռանալուց յետոյ, օ-
րիորդը մորթէ զխարկը հանեց դը-
րեց սեղանի վրայ, ուր խառն ի խառն
ընկած էին ուսուցչի սպասու-
կան ամսագիրներ թերթեր, թէյի
ազտոտ բաժակ, պապիրոսի միացորդ
ներ... Փանթալոնի, վարսիքի կոճակ,
կօշիկի վրձին, սարսի՛ ակոսները
թափած եւ աղտոտ...
—Իսկական նիհիլիստի սենեակ .
միմիջեց օրիորդը . ի դուր չէին ստում
որ շատ լուրջ մարդ է . դատարկ բա-
ներով չէ զրազվում... համոզված եմ
որ պէտք է սիրեմ. անշուշտ հոգեակ
է . դեռ խօսքերը չէին վերջացել երբ
ներս մտաւ ինքը՝ Մարդավազովը

ուսերը՝ այլ ջեր շինութիւնը
և ամրակուս կողմակերպութիւնը
Անկեղծ ազգասէրներու գէժ ու
նինք դաւադիրներ, նուիրատու
ներու գէժ՝ շատ խոհեմով շա
հագործողներ, գաւնուկներու
մէջ գիշատող գայլեր, դուք ե
թէ կարող էք, մաքրեցէ՛ք վեր
ջին հակընդդէմ գործողները և
ազգը շատ ու շատ շնորհակալ
կը լինի Ձեզ, ու թողուցէ՛ք, որ
նորակալմ աշխական Միու
թիւնները յառաջ վարեն խա
ղազութեամբ իրենց ընտրած
գործը, որ ազգին կը պատկանի,
ազգուսպէս բողոքեցէ՛ք, դատա
պարտեցէ՛ք միայն այն ժամանակ
երբ անոնց գործնական ձախող
ուսածը ծայր տայ և այն ժամա
նակ Ձեզ հեռու եմ ես ալ :

Մ. ՀԱՅՎՈՒՆԻ

ԱՂԲԱՏԱԽՆԱՍԸ

Յաւով կը լսենք թէ տեղւոյս Աղք.
ընկերութիւնը իր ցոյց տուած բուռն
ջանքերուն հետ մէկտեղ չէ կրցած
իր բարի գործը հաստատական հիման
վրայ դնել մինչեւ այսօր. վասնզի
Վառնայի հայ հասարակութեան գի
տակից եւ նիւթական կարողութիւն
ունեցող գասակարգը ըլլայ վաճառ
կան, ըլլայ արհեստաւոր եւ գործա
ւոր որոնցմէ ընկերութեանս նպաս
տող անդամները որոշուածն օրըստօ
րէ իրենց նուէրներու շարքը աւել
ցնելու տեղ վերջերս մաս մը բա
ցարձակապէս կը մերժեն տալ իրենց
որոշուած նուէրները մինչեւ անգամ,
առանց մտածելու թէ հոս Վառնայի
մէջ եղած շքաւորները օրէ որ շատ
նայու վրայ են, եւ որոնք հայ ժո
ղովուրդին այդ փոքր նպատակներով է
որ պիտի կերակրուին եւ բժշկուին
որովհետեւ մենք սա քաջ դիմաւոր
ենք որ մեր ազգատները միմիայն
մեր նուէրներով է որ կրնան նայ
ուել, ինչու որ այս վիճակին մէջ օ
տարէն օգուտ սպասել յիմարութիւն
է :

Ուստի պիտի գամ խնդրել Վառ
նայի հայ հասարակութեան որ իսկ
տեղւոյս մէջ գտնուած հայ ազգի
շքաւորներու չը զլանան տալու ի

րենց գոյն նուէրները անոնց միակ
պաշտպան եղող տեղւոյս Աղք. ըն
կերութեան որը պէտք ունի միշտ
անոնց նուէրներուն ինչու որ անոնց
անոնց չկրնար նպաստել մեր տեղ
ւոյս հայ ազգի թշուառ եղբայրնե
րուն եւ քոյրերուն :

Ուրեմն կրկին անգամ ըլլալով պի
տի խնդրեմ Հայ հասարակութեան
որ այս մասին խիղճ ունենայ, հա
կառակ պարագային ամօթ է մեր ազ
գին պատուոյն, նաեւ կը լսենք այս
օրեր թէ՛ ներկայ Աղք. ընկերու
թեան գործադիր մարմինը իր ընդ
հանուր ժողովը գումարներուն ամօթի
կը խնդրէ իր պատ. անդամներէն որ
ներկայ գտնուին զալ երեքշաբթի օր
Օդեստոս 15 ին. կէսօրէն վերջ ժամը
2ին Աղք. վարժարանին մէջ ցոյց
արուելու համար Աղք. ընկ. միասր
ւոյ հաշիւները եւ նոր փորձ. ժողո
վոյ ընտրութիւնը կատարելու : Ա
ներկայիս եմք թէ Պատ. անդամները
առաջին եւ վերջին համարելով այս
հրաւէրը պիտի փութան վերոյիշեալ
օրը ներկայ գտնուիլ Աղք ընկ. Ընդ
հանուր ժողովին :

ԱՂԲԱՏԱՍԷՐ

ՖԻԼԻՊԷԻ ՄԵԾ ՄԹԻՆՔԻ

Պուրկարական գրգռուածը եւ յու
զումները ընդդէմ յայնորու բա
ւական ծանր վնասցին յայնորու ինչ
պէս ծանօթ է որոշման մը համաձայն
Պուրկարիոյ խոշոր քաղաքներէ զեր
կուած ներկայացուցիչներու ներկա
յութեամբ պիտի ըլլար մթինք մը՝
ուր ժողովուրդի պահանջները եւ ո
րոշումները պիտի ներկայացնէին
եւրոպական դեսպաններուն եւ պուր
կար կառավարութեան անոնց գոր
ծադրութիւնը անմիջապէս պահան
ջանքով ժողովին օրը արդէն որոշ
ված էր ներկայ այստոյս 6ը կիրակի
առաւօտ եկեղեցիի աւարտուածն վերջ
ժամը 10ին Ջար Սիմէօն պարտէզի
առջեւ : Ամսոյս հինգին շարքի կէ
սօրէն վերջ, ժամը 3ին եկած ներկա
յացուցիչներու մեծամասնութեամբ
ժողովը բին Ֆիլիպէի մէջ գեռ կան
ցուն մնացած, իրիւս նմուշ, առաջ
նակարգ օթել Միթրօքի մէջ
հետեւեալ օրուան մեծ մթինքի ծրա
գիրը եւ որոշումները արժարժելով
ժողովին կը նախազանէր ծանօթ
հայասէր առթիւր Փօփօվ. ժողովը
ներսը կըլլար, դուրսի հոծ բազու

թեան ականատեսութեամբ, այս
մեծ օթելի ճակտին ոսկեզօծ տառե
րով գրուած օթել Միթրօքը կա
րուէր՝ ու կը մկտուէր «Կանաչ օ
թել» շէտ (6) Աւգուստի ժողովը ժ
ւր 3էն մինչեւ 5—5 կէս պահած
ները որոշած ու գործադրած էր. ու
մեծ ուրախութեամբ ցրուեցան ժող
վի ներկայացուցիչներէն ոմանք մաս
նաւոր տները՝ պուրկարի. հայու եւ
երէյայի, տեղաւորուեցան. Չի մոռ
նամ ըսել որ կէս օրին ժամը 11 կէ
սին մասնաւոր կառախուսելով մը ե
կաւ նախարար Փէթթի առանց կա
ռախուսմէն վար իջնալու կէս ժամէն
աւելի տեսուեցաւ օտարականութի
հետ խիստ հրահանգներ տալով մեկ
նեցաւ դէպի Սօֆիա. Ոստիկանապե
տը պէտք եղած միջոցներ ձեռք ա
ռաւ որպէս զի անդորրութիւնը չի
վրդովուի. ամէն օտարականի քով ե
րեք վինուր դնելով սուիններ հրա
ցաններու վրայ անցուցած. Յոյները
հրապարակի վրայէն անհետացած է
ին շատեր տաճկաստան մեկնած, շա
տաւոր հոս հոն գիւղերը ցրուած էին
եւ շատեր ալ տուններին ապաստ
նած էին. Այդ օր ոչ մի գէպք չի
պատահեցաւ. 6ին. կիրակէ անաւօտ
ժամը 10ին հոծ բազմութիւն մը կը
հաւաքուէր Ջար Սիմէօն պարտէզի
ընդարձակ հրապարակը. ամբողջ կու
սակցութիւնները իրենց մասնաւոր
գրողներով բազմութեան առջեւ
կեցած իրենց գրողները կը բարձրա
ցունէին. զինուորներ իրենց յիսա
պետներով ու հարկւարներով
բազմութեան քայլերին կը հետեւե
ին եւ բոլոր փողոցները զինուորնե
րով գոցած էին : Բազմութիւնը ան
համբեր կըսպաւէր ճառախօսներու.
Թէեւ ոմանք կը հաշուէին 50 հազա
րի մօտ բազմութիւն, բայց 15-20
հազար հազիւ կար, որովհետեւ ամ
բողջ ճանապարհները զինուորները
կտրած եւ շիջակայ գիւղերէն եկող
ները ետ կը դարձուէին : Երեք ճա
ռախօսներէն երկրորդը Ֆիլիպէի
ծանօթ հայասէր փաստաբան տօք
թօր Փօփօվ գրեթէ ժամէն աւելի իր
հրահանգի խօսքերովը ամբողջ բազ
մութեան ուղարկութիւնը լարեց եւ
ներկայացուցիչներու ներկայու
թեամբ որոշուած եւ գծազրուած ո
րոշումները մի առ մի հաղորդեց :
Ըսելով՝ բոլորք թուր յոյների գէժ
ու թիշ բան կարելի չէ՝ պէտք է բո
լոր յունահպատակները իսպառ ար
տաքսուին իսկ պուրկարականակնե
րը. իրենց բարձր քաղաքացիներ
ըլլալին հաստատեն... երաշխաւո

րեն. Պուրկարիոյ մէջ ըլլալիք յոյն
պատրիարքութիւնը մեր էջզարքի
հրամանովը ու անոր իշխանութեան
տակը ըլլայ Յոյն նախակրթարան.
ները պէտք է պուրկարիէն ըլլան :
Մեր յարաբերութիւնները պաշտօնա
պէս խղել յոյն կառավարութեան
հետ : Ասոնք մէկ կողմէն ընելով
միւս կողմէն պէտք է դիմենք թուրք
կառավարութեան որպէսզի Մակե
դոնիայի եւ էտիրնէի բարեկարգու
թիւնները ընելով՝ Մակեդոնիային
յոյն շէթները-հրոսակախուսները
զուրս քշէ, իսկ եթէ չուզեր ընել
եւ չընէր՝ պատերազմ թուրքին դէմ
եւ կարող ենք մենք բարեկարգել
Այլ բաւ է մեր եղբայրները քոյրերը,
մայրերը ու հայրերը թուրք եւ յոյն
եղբայրացած՝ գազաններու գարհու
րանքին ենթակայ ըլլան... Երրորդ
ատենախօսէն վերջ՝ որոշուեցաւ եւ
րոպական դեսպաններուն այդ որոշ
ուած ծրագիրներէն մէկ մէկ հատ
ներկայացուցնել իրենց տէրութեանց
ուղարկելու համար՝ եւ մէկ ալ իրենց
կառավարութեան. Եթէ կառավա
րութիւնը չը դադար այս խնդիրնե
րով ինք ժողովուրդը ամեն միջոց ի
գործ պիտի դնէ որովհետեւ ու ազ
գին կամքը դաւանանքը այս է որ
կը պահանջէ... Բազմութիւնը սկսաւ
շարժիլ. գրողները բարձրացուցած
դէպի ուս դեսպանատունը (թէեւ
շահար շէթն ուղեր երթալ իբրեւ ին
կած... Բայց շատերը դեռ ցեղային
մոլեռանդութեան շնորհիւ ուզե
ցին անկէ հուռաւներով
Անգլիական դեսպանատունը՝ եւ
հոնտեղէ ալ ֆրանսական դեսպանա
տունը ուր հիւպատոսը մի քանի խը
րատական խօսքերով բազմութիւնը
ճամբու դրաւ. Թէեւ բազմութիւնը
աշխատեցաւ իտալական դեսպանա
տունը ալ երթալ բայց զինուորներու
մեծ բազմութիւն մը հետ դարձուց ո
րովհետեւ իտալական եւ յունական
դեսպանատուները դէմ առ դէմ ըլ
լալուն չուզեցին գուցէ մի ցոյց ընէին
յունական դեսպանատան գէժ. վեր
ջապէս բազմութիւնը վերադառնալով
հուռաւներս, եկաւ ճումայ ըսուած
հրապարակը անկէ ինքը ի
րեն խաղաղ ցրուեալ. Այդ օր ալ
խաղաղ անցուցինք, այժմ հանգիստ
եւ անդորրութիւն կը տիրէ : Եթէ
ծիծաղելու բան մը կար նէ այն ալ
միթիւնքէն վերջ՝ մէկ երկու անուա
նակաւ հայ յեղափոխականներ.՞.
գարեջրատան հերոսներ՝ մէկ երկու
պուրկար յեղափոխականներու հետ

30ը նոր անց մոխրագոյն, խորա
մանկ աչքերով երիտասարդ, միջա
հասակ, լայն մօրուքով, նուրբ բնի
րով, ճերմակ գէժքով հնամաշ գգեսա
ներով՝ փանթալոնի երկու կոճակը,
ժիլի մէջնազի կոճակը փրթած պա
րոն, ու վազելով դէպի հիւրը գըր
կախառնվեցին, հիւրն էլ նոյն ն
աւանդով կպաւ սան ախրը, ու
ջերմ կարօտագին համոզյուների շրփ
շրփոցը սենեակը բռնեց.
— Բարով եկար, Մանիա. իչնու
այսքան ուշացար. փողոցումն էլ տես
նէի կը ճանաչէի քեզ, լուսանկար
շատ նման է. ամուսինդ էլ եկաւ...
— Դու էլ ինձ դրկածդ պատկերիք
նմանում ես շատ : Ամուսինս կը գայ
երկու ամսից յետոյ. ինձ քնեցին.
չը թողին միւս Մոսկովայում. գիտես
չէի ինչ անպիտանները են...
— Կաւլաւ, մօրուքը շոյելով ա

սեց Մարգարազովը. նստի, թէյ
խմենք. հիմա ծառան տաք ջուր կը
բերի. եկ մի քիչ սեղանը կարգի
բերենք... ու սկսեցին սեղանը կարգի
բերել... եղած սեղանը հաւաքելով
եւ լցնելով Մարգարազովի աղքատիկ
մահճակալի վրա. Աշխատած միջո
ցին Մարթավազովի փողպատը ըն
կաւ, ու ժիլի մի կոճակն էլ կրտ
րըվեց. Տիկին Մանիայի մազերը բո
լորովին քանդվեցին : Մարթավա
զովը ուզեց փողպատը կպել, օսլա
յած օձիքն էլ ընկաւ. Մանիան մա
զերը ուզեց շտկել թեւերի տակի կա
րերը քանդվեցին... այնպէս որ երբ
վրացի ծառան թէյամանով տաք
ջուրը ներս բերեց մի վայրկեան չը
վարած կանգնած մնաց :
Թէյամանը գալուն պէս մեր ար
տակարգ զոյգը մոռացաւ ինքզինք
նին կարգի բերելը. եւ սկսեց թէ

յի պատրաստութիւնը տեսնել :
Յանկարծ Մանիան բացակուցեց.
— Բայց հոգեակ. մի քանի ժամ է որ
պապիրոս չեմ ծխել անշուշտ ունես,
մի տուր տեսնեմ :
Մարթավազովը գրպանից հանեց
թղթէ տուփով պապիրոսները. տու
փը ճիւղած էր. պապիրոսները ջուր
ու փշուր եղած : Մանիան հազիւ մի
ողջ պապիրոս գտաւ ու անմիջապէս
վառեց.
Մի քանի վայրիեանից թէյը լրց
ված էր բաժակների մէջ, Մանիան
մահճակալի վրա դրված թերթերի
ամագիրներին վրա նստած իսկ Մար
թավազովը աթոռի ծխում, թէյը
խմում եւ գրուցում էին : Մանիան
պատում էր իր հերոսութեան մասին,
որ առաջ էր եկել Չերնիշեւսկու հո
գեհանգստի մասնակցելու պատճառով
բանտարկելովը : Պատում էր իր

Միշայի հետ ամուսնութեան, սիրա
հարութեան մասին, որը նոյնպէս յե
ղափոխական է եղել. Եւրոպա գրտն
նըվող ուսու ուսանողների հետ նա
մակագրութիւն ունենալու պատճա
ռով, Եւ իրօք այդ միջոցներին Ռու
սաստանում իբրեւ յեղափոխական
հռչակվելը շատ դիւրին էր. բաւա
կան էր մի անտիպ-սղատ տոսնաւոր,
չարադրութիւն ունենալ, Չերնի
շեւսկի եւ Կերցէն կարգալ, այլեւս
յեղափոխականի տիտղոսը պատրաստ
էր. իսկ տասնըհինգ օր բանտ նըս
տիլը արդէն հերոսութիւն էր տալիս
ՎԱՐԴՕ
(Շարունակելի)

նստած կը կօնծէին ու կը կօնծէին եւ մեր քաջարի հայ յեղափոխականները հայ մը ներս ընկնելուն՝ իրենց նստած աթոռներէն կանգուն մը վեր բարձրանալով պիտեմունքն սազ տա լով՝ ներս ընկնող հայուն աչքին երեւին... որպէսզի ըստի թէ՛ Տիարը օ՛հ (օ՛) մակեղոնական յեղափոխականներու հետ նստած... օ՛հ յեղճուկ արարածներ՝ դուք միայն կազ Երուսաղէմ... եստ թեան համար ոչ միայն ազգի շահն է որ կը մտածէք՝ այլ ձեր ծակ քաղնները պարպելէ վերջ... վերջն ալ անձնական հագուստը իսկ պիտի ծախէք՝ միայն Տիարը յեղափոխական է ըսել տալու համար՝ բայց ազգը ինչ օգուտ կարող է տեսնել այդ տեսակ լաքէ սիրող յեղափոխականներէն... ։

Շարժում մը 834 թիւի մէջ լոյս տեսած Ֆրիլիպի թղթակցութիւնը տեղիս լաքէները դարձեալ յուզեց ու գրգռեց՝ այս մեր հանրածա նօթ մուրացկան ձրիակներնը՝ իրար անցնումն՝ ճանք մ'ը գիտէ ինչպիսի տխմար եւ տգէտ մէկն է՝ ՆՇարժում մը այս թղթակցութիւնը որ սուտ իրաւ գրան ըր յարմարեցունելով՝ ուղարկէ իր վարդօրն՝ այն ալ իր վրէժը լուծելու համար՝ մէկ բառը տասը ընելով իր կողմից կը հրատարակէ կոր՝ միայն մեզ հալածելու համար (օ՛) բայց գիտակից անկեղծ Դրօշակեան ընկերներ՝ ատոնց այդ խաբէբայական խօսքերին տարբեր պատասխան կոճտան կոր՝ որովհետեւ այժմ գիտակցութիւնը ինտելիգէնզ քերտասարգութեան մէջ է որ հոսանքը սկսած է. որքան որ թղթակից պարտնը՝ իր գրութեան մէջ կըսէ. (օ՛) Եթէ երբէք մէկը ելլայ ու այս պայմաններու մէջ համարձակի քննադատել անոնց գործունէութիւնը, 95

բրօքնէթ կազմող մասսան իսկոյն Ջրպարտիչի անունով կը մկրտէ զինքը... Այլ եւս ասոր ալ մտան անցած է. ինտելիգէնտ եւ գիտակից երիտասարդութիւնը «Շարժում» մէջ հրատարակուածներուն կէտ առ կէտ հետեւելով բարձրաձայն ազգակուծէն՝ պէտք է կազմակերպութեան անբարոյականացման սխտէ՛մը՝ հիմնովին քարեփոխել. եւ սկսուած պայքարին պէտք է ուժ տալ, ինչ է այս խայտառակ սխտէ՛մը՝ ուր քանի մը ձրիակեր Պրօնեաններու, մուրացկաններու ձեռքը «մօտօրօ» եղած կուսակցութիւնը ոտակալի գահավիժման տանին կոր՝ ինչ է այս կուսակցութեան զբաղմունքը ու խտացնացութիւնը. հոս հոն կուտան, կը խմեն եւ կը հրճուին մինակ իրենց անձին համար՝ եւ ոչ յեղափոխութեան. Ասէն օր նոր նոր մարդիկ կուգան ու կերթան՝ մէկ ամսուան մէջ քանի-քանիներ 10 անգամէ աւելի գացին ու եկան, ուր գացին ինչ ընելու, եթէ գործի կերթան հաստ ինչո՞, կուգան յեղափոխութեան գրամները իրար վառնելով՝ կամ ինչ ընելու կուգան հոս... ՆՇարժում մը այս թղթակցութեան մէջ է ըսելով իրարմէ կասկածելով կատուններու նման իրարու մլաւեն կորի Փոխանակ շարքերը ու կարգերը մաքրելու՝ ձեր բուն ու գործը ըրած էք Շարժում մը այդ գործին շատ տեղեակ թղթակցը գտնել՝ բայց իրո՞ր են, իրօ՛ւր ձեր

շանքերը. ինչպիսի մեղաւոր են վարդօն եւ «Շարժում» թղթակցը, ձեր խաղաղութիւնները խարազաններուն եւ մերկացնելուն համար. եւ այդ ինչո՞ւ համար է որ կրնեն՝ իհարկէ կուսակցութիւնը վերջնական անկուսակցութեան ազդիւ փափայուն համար այսպէս անկեղծ պայքար կը մղեն տիրող վատ սխտէ՛մին զէմ վարդօն 0 հարաբերութիւն է (օ՛), եթէ իրաւ կերպ է գէթ գործին համար. հապա՛ Ամերիկայի մէջ նստող զվարազ-վահանիս վառմանի կեդրոնները գործ մը արդիւնք մը մէջտեղ բերած են. ապա Պոլսոյ մէջ բողոքի հետ մտնած, հազարաւոր ոսկիները ինչ արդիւնք եւ ինչ գոյժ մէջտեղ բերած են՝ թո՛ղ ցոյց տան՝ եւ այսօր այս սասանակ հացկատակները են որ կուսակցութեան գահին վրայ բազմած յեղափոխութեան դրամները կը շորգեն ու կը շորգեն. Ռօստոմները եւ Ռօտէն (Անտոն-Կօ.) վարդօն կուզեն վարկաբեկել թէ Ֆրիլիպի հանրածանօթ եւ հոչակաւոր դրամի համար Դրօշակեան եղող լաքէները... որքան կուզեն թո՛ղ հարուածեն, որքան կուզեն թո՛ղ չարարտեն Արգարութիւնը միշտ յաղթանակող է. գիտակցութիւնը այլ եւս ընդհանուր ծաւալ առած է ամէն կողմ, լաքէները այլ եւս չեն կարող իրենց ուզածին նման աս ան զրպարտել եւ վճիռներ արձակել. Այժմ կը սպասենք Ընդհանուր ժողովին. թէ եւ անկէ ալ յոյս չունինք՝ եթէ ըստ ընտրուած պատգամաւոր ներկայացուցիչ պարտները տեղիս սինլքորի նման վարձակներն...

Վեշ-Մեմն

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Հայրիկը նոր կոնդակով մը հայտնիներուն ու իրաւունք կուտայ եկեղեցական ընտրութիւններուն մասնակցելու. Տեսնենք պահպանող կանները ասոր գէմ ինչ ժխոր պիտի բարձրացնեն. — Բարիկի մէջ սկսալ լոյս տեսնել «նոր — Հանդէս» երկշարժութեայ թերթը. Արամ — 11 շոտ, «Հայրենիք» մէջ, ելբմն թուրքիոյ շուրջը «Դրօշակ» մէջ գերողի. խմբագրութեամբ.

Հրատարակութիւնը Բարիկի գաշնակցական ուսանողութեանն է. Հանդէսը լաւ տպագրութիւն կը թողու. Յաջողութիւն կը մեզ թեմք.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարիէն Պատի մէջ Անգլիոյ թագաւորը շատ սիրով վերաբերուած է գէպի Պուլկարիոյ իշխանը, փոխարձարձաբար զլրար ճաշի հրաիրած են. միասին թատրոն գացեր են. Այս տեսակցութիւնները Կուստրիոյ և Գերմանիոյ մէջ զանազան բացատրութիւններու առիթ տուած են.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Օգոստոս 10ին Պոլսէն կը հեռագրեն թէ թուրք պաշտօնական շրջանակներու մէջ կզբաղին Պուլկարիոյ անցքերով. կերբեւայդ անցքերը ազգած են. որովհետեւ թուրք և պուլկար յարաբերութիւնները կը լարուին. թուրքիոյ թշնամութեան առաջին նշաններն են անգլիոյ ղուլթիւնը վճռելիք վաճառականական գաշինքին մէջ. Այդ պատճառով տեղիս պուլկար գործակատարը Նաչել իշխոր հրաժարականը տուած է և պիտի մեկնի Մօֆիա.

— Պաշտօնական շրջանակները կը հաւատեցնեն որ Սուլթանի առողջական վիճակը բարւոքուած է. սակայն գիւանագիտական շրջանակները գիտեն որ գիտմամբ կը թագցնեն Սուլթանի իրական վիճակը. իրաւի փոփոխութիւն կայ գէպի լաւը, սակայն հիւանդութիւնը կը մնայ և կարելի է որ շուտով ընկնէ Սուլթանը որը դեռ ժառանգական խնդիրը լուծած չէ.

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Սպայ մը նախկին երեսփոխան Եակօբօսը մենամարտի հրաիրած է պատճառաբանելու որ Նաաչիներ իր, Տու մայրւմ արտասանած ճառին մէջ վիրաւորեր է զօրաբանակը.

— Մուկուսյէն հեռագրով մը Բեթիսպուրկ կը հրաիրուի երեսփոխան Սաւելու. իբր թէ երեսփոխաններու գաղտնի ժողովի մը մասնակցելու համար Մեկնելէն իվեր լուր մը չըկայ. հակառակ ընտանիքի և բարեկամներու բոլոր ճիգերուն. կը կարծուի որ Տու մայրի հակառակորդներու կողմէն գաւազրութեան մը զս գացած է.

ՄՍՍՏԱՆԻ

«ՆՈՈ — ՀԱՆԴԵՍ»
Նախաձեռնուած ըլլալով Փարիզի Հ. Յ. Դ. Ուսանողական Մարմնի կողմէն, «Նոր — Հանդէսը» պիտի ջանայ ծանօթացնել հայոց մասին օտար լեզուով լոյս տեսած կարեւոր աշխատութիւնները եւ ամփոփ տեղեկութիւններ եւ տեսութիւններ տալ միջազգային հասարակական եւ քաղաքական այժմէութիւններու եւ եւ մասնաւորապէս հայկական հարցի եւ կեանքի իրականութեան մասին.

Խմբագրութեան հասցէ՝
Յ. Ռիւ Պէրթու. 6 Բարիկ (Ֆրանսա)

ՄՐԱՅ ՍԱԵՏԻՆԵՆԻԷ

Վառնայի հայ երիտասարդական «ՄԱՍԻՍ» խումբը, յառաջիկայ Օգոստ. 15ին, Երեքշաբթի գիշեր մեծու պատրաստութեամբ պիտի ներկայացնէ ի նպաստ Վասպուրականի կարօտելոց, առաջին անգամ ըլլալով.

— Ա Ր Յ Ա Կ Բ. —

Ողբերգութիւն 5 արարուած անմահ Պէշիքմաշլեանի հեղինակութիւններէն. Ողբերգութեան վերջ խիստ ծիծաղաշարժ զաւեշտ մը տեղի պիտի ունենայ հայերէն լեզուաւ.

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

«Ա Ր Ա Ք Ս» ՆՈՒԱԿ ԽՈՒՄԻԻ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

«ՄԱՍԻՍ» Թատերախմբի

Գ Ե Ղ Ո Ւ Ն Ի

Ի ՆՊԱՍՏ ԿՈՎԿԱՍՍԱՆԻՍ

ԱՐԿԱՄԵԱԼՆԵՐՈՒ

Գեղունի իր ծանօթ ծրագրով, իրեն յատուկ գեղարուեստական եւ գրական բովանդակութեամբ հրատարակուած է կովկասահայ մեծ զսնգուածը փոթկոտօրէն սփոխեց արկածալ թրքահայր. հիմա ինքն է լացողը, ինքն է վիրաւորվածը, եւ ինքն է սովի եւ կրակի մատնուածը այդ մեր հայութեան ամենէն ազնիւ զաւակներուն հիմա ձեռք կուտայ ԲԱՐՅՊՈՐՏՈ թիւնը. ձեռնպահ չի մնար եւ Գեղունին. որ կովկասահայուն սրտին մէջ համակրանքի բաժին մուծի. Ս Ղազար 1000 օրինակ այս նոր Գեղունիէն (1906) յոյց թիֆլիզի ի նպաստ կովկասահայ արկածալներու յանձնագրողութիւնը հարուստ հայութեան այն ամէն անհատ ու տառապաններու գանձանակին մէջ համաստի մը - 10 Ֆր. նետելու կարողութիւնն ունի, ցանկալի է որ գիմէ այդ յանձնագրողին, ուսկից փոխաբէն իր բարեգործութեան, կը ստանայ նոր հրատարակուած Գեղունին. որուն կատարելութեանը համար թերթին մի եւ նոյն վարչութիւնը ամէն ճիգ ու ջանք թափած է եւ աւելի եռանդով.

Գեղունիի բաժնեգրին է 10 Ֆրանկի Մեր հասցէն է ԷՄՅՐԻՄԸՐԻ ԱՐՄԷՆԻԷՆ ՍԹ. ԼԻՉԱՐ ՎԸՆԻՍ (Իթալիա)

Ա Ր Ե Ի Ե Լ Ք

Լոյս տեսաւ մեր սպարանէն Հայաստանի եւ զրացի երկիրներու մեծադիր (մեղր 1 1 25) քարտեզը տրեւելը վերնադրի տակ Այս քարտեզը յատկապէս պատրաստուած է ազգային վտարանդի ու եւ վաճառականական գրասենականներու համար. Մասնաւոր խմբագրութեանն է տպագրութեան մաքրութեան եւ տառերու յստակութեան. Եթէ զանազան գոյներով կ'որոշուին բոլոր զրացի տէրութեանց երկիրները. Գարտեզին մէկ անկիւնը մայր նաւ Կ. Պոլսի մասնակի քարտեզը. իսկ հարաւակողմը զանազան սիւնեկաց մէջ գրուած են օդակար վիճակագրական տեղեկութիւններ.

Գինն է ֆրանկա 5 — որով 2 — տուար 1.
Իմել մեր օդակար հասցէին. Էմբրիմըրի Արմէնիէն Սթ Լազար ՎԸՆԻՍ (Իթալիա)